

Թեան համեմատ՝ պալատան շքեղագոյն մասերէն մին էր մեր քով ալ, ինչպէս կը նկարագրուի Պարսից Արտաշէս թագաւորինը (Եսթ. Ա, 6): Եւ արդարեւ Գագիկ արքայ արծրունի՝ Ռշտունեաց իւր ամրոցին մէջ շինեց «տաճարս... հրաշալիս պատկերակերպս» (Արծ. 328), որոց մին ալ հարկաւ ճաշին յատուկ էր: Նոյնպէս Եզնկացին Յովհան կը ճանաչէ «զթագաւորաբնակ ոսկեզօծ տաճարս զարմանալի» (Ներք. 139), որ կարծես Ռուբինեան արքունեացն են:

Սակայն բացօթեայ վայրերուն մէջ, ինչպէս ի բանակին, ճաշարանը կը պատրաստուէր «խորանի» կամ վրանի մը մէջ, ինչպէս Տերենտին էր՝ ուր հրաւիրուած էր Պապ (Փաւս. 232). զի մեր թագաւորը ալ բանակին մէջ վրանաբնակ էին եւ ունէին իրենց «խորանն արքունի» (նոյն, 118): Այսպէս Տրդատ Երիզայի գիւղին մէջ, ուր բանակովն եկած էր ի պատիւ Անահտայ, «եմուտ ի խորան անդր եւ յընրրիս բազմեցաւ» (Ազթ. 49): Փիլոնի մեկնչէն կ'իմանանք՝ թէ ժամանակի Հայոց շատ հաճելի էին նաեւ բացօթեայ զինարբուծիւնը «ի մարգ կամ ի բուրաստանը», ուր կը հրաւիրէին զիրար (Լծ. Հես.):

2 . — Սեղան: — Տաճարին գլխաւոր կա-